Հայաստանում կայացած նախագահական ընտրությունները հիմնականում համապատասխանում են երկրի ստանձնած միջազգային պարտավորություններին, սակայն հետագա բարելավումների անհրաժեշտություն կա

ԵՐԵՎԱՆ, 20 փետրվարի 2008թ. – Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունը այսօր հրապարակված իր հայտարարությունում ասեց, որ երեկ Հայաստանում կայացած նախագահական ընտրությունների անց կացումը հիմնականում համապատասխանել է երկրի ստանձնած միջազգային պարտավորություններին, չնայած անհրաժեշտ են հետագա բարելավումներ գոյություն ունեցող մարտահրավերներին անդրադառնալու համար:

Դիտորդները գտել են, որ Հայաստանի իշխանությունները իրական ջանքեր են գործադրել նախորդ ընտրություններում նշված թերություններին անդրադառնալու համար: Սակայն հետագա բարելավումների և քաղաքական կամքի անհրաժեշտություն կա՝ անդրադառնալու այնպիսի մտահոգությունների, ինչպիսիք են ընտրական գործընթացների նկատմամբ հանրային վստահության պակասը և պետության ու կուսակցությունների գործառույթների միջև հստակ տարանջատման բացակայությունը: Քվեների հաշվարկման գործընթացը չի նպաստել մասնակիցների շրջանում կասկածների նվազեցմանը:

«Մեծ թվով հայեր մասնակցեցին ակտիվ և մրցակցային ընտրություններում՝ ընտրություն կատարելու իրական քաղաքական այլընտրանքների միջև: Պետք է անդրադառնալ մեր կողմից, մասնավորապես քվեների հաշվարկման գործընթացում, դիտարկված հիմնախնդիրներին՝ ամրապնդելու ընտրական գործընթացների նկատմամբ ընդհանուր վստահությունը», - ասեց ԵԱՀԿ ԽՎ փոխնախագահ և ԵԱՀԿ կարճաժամկետ դիտորդների հատուկ համակարգող Ան-Մարի Լիզանը:

«Այս ընտրությունների շրջանակում նկատելով բարելավումներ՝ դրանց իրականացման, մասնավորապես քվեների հաշվարկման ընթացքի հետ կապված հիմնախնդիրները որոշ դեպքերում սասանել են մարդկանց վստահությունը: Վերջ ի վեջո, վերջնական ընտրությունը Հայաստանի ժողովրդի ձեռքերում է: Այդ իսկ

պատճառով, ընտրական գործընթացների նկատմամբ նրա վստահությունը որոշիչ է իրական ժողովրդավարության համար», -ասեց ԵԽԽՎ պատվիրակության ղեկավար Ջոն Պրեսկոտը:

«Համեմատած նախորդ նախագահական ընտրությունների հետ էական առաջընթաց է գրանցվել ընտրական գործընթացների նախապատրաստման և անց կացման գործում: Այնուհանդերձ, ընտրական ողջ միջավայրը և գրանցված միջամտությունները դեռևս պետք է ուշադրությամբ գնահատվեն: ԵՄ-ն իր Հարևանության Քաղաքականության միջոցով կշարունակի աջակցել Հայաստանում ժողովրդավարության ամրապնդման գործընթացին », - ասեց Եվրախորհրդարանի պատվիրակության ղեկավար Մարի Ան Իսլեր Բիգանը:

«Ընտրությունը մեկ օրյա գործընթաց չէ, և այսօր արվող հայտարարությունը նախնական է: Մենք կմնանք Հայաստանում դիտարկելու գոյություն ունեցող մեխանիզմներով ընտրություններին առնչվող վեճերի լուծման գործընթացը: Այս գործընթացը պետք է պարզաբանի ընտրությունների այն ասպեկտները, որոնք հավելյալ հետաքննության կարիք ունեն», - ասեց ԺՀՄԻԳ ընտրությունների երկարաժամկետ դիտորդական առաքելության ղեկավար Գեռտ Արենսը:

Մոտ 400 դիտորդներ, այդ թվում 75 խորհրդարանականներ, են հետևել ընտրությունների ընթացքին ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ), ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի (ԵԱՀԿ ԽՎ), Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) և Եվրախորհրդարանի կազմում:

Լրացուցիչ տեղեկությունների համար, խնդրում ենք կապվել

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ներկայացուցիչ Յենս-Հագեն Էշենբեխերի հետ +374 94 46 4297 (բջջային) կամ +48 603 683 122 (բջջային) հեռախոսահամարով կամ jens.eschenbaecher@odihr.pl *էլ.փոստով*

ԵԱՀԿ ԽՎ-ի ներկայացուցիչ Անդրեաս Բեյքերի հետ +374 94 43 70 22 *(բջջային) հեռախոսահամարով կամ* andreas.baker@oscepa.dk *էլ.փոստով*

ԵԽԽՎ-ի ներկայացուցիչ Նատալի Բարջելինիի հետ +33 665 40 32 82 *հեռախոսահամարով կամ* nathalie.bargellini@coe.int *էլ.փոստով*

Եվրախորհրդարանի ներկայացուցիչ Թոմաս Գրոնեթի հետ +32 49 89 83 369 *(բջջային) հեռախոսահամարով կամ* thomas.grunert@europarl.europa.eut *էլ.փոստով*